№ 67 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՄԱՐՏԻ

1913
ԿԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՄԱՐՏԻ № 67

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարուան 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն՝ № 2—58.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և ամէն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Նովոսիլց դուբս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метиль и К°, և նրա բաժանմունքներում—Петербургում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թ-ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդագիր 10 րուբլին, ծրիւրաւոր կը առնեն հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

ԲՆԱԿԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՒՈՏԻ և սրտի։
Բժշկութիւն նաև ՏՈՒՐԲՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԸՍՏԻ պրէպարատներով և վերաբուժական միջոցով ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։

Ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Զբաղմունքին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Ծօլօթայ, ԲՂՏՐԱԲԵԱՆ փող. № 23 (անկիւն Գանձակայ)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 92. 100—39

Երդ.-հաւատարմատար
ԱՂԷՔՍ. ՊԱՊՈՎԵԱՆՑ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ Вознесенская 9, առանց Ղալամքարեանի։
առ. 238. 6—3

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

[illegible] մեր առաջ։

Նա և պատուէր կը նկատէ։

Դա այն ծրագրի իրագործութեան կը նկատէ, որով այս տարի Շիրակը պէտք է մի փոքրիկ հարցաքննութեան ենթարկվի։

Այս ամառ Շիրակի կեդրոնում, Ալէքսանդրօպոլ քաղաքում, պէտք է տեղի ունենայ գիւղատնտեսական մի ցուցահանդէս։

Նա նշանակված է յունիսի վերջին օրերին։

Ցուցահանդէս կազմելու գաղափարը արծարծվեց անցեալ ամառ և այս տարի նա իրականանում է։

Նա գլխաւորապէս պէտք է նուիրված լինի կենդանաբուծութեան, բայց հնար եղածին չափ պէտք է լինակատար լինեն և միւս բաժինները։

Ցուցահանդէսը պէտք է տեղի ունենայ այն մեծ համառուսական հանդուսարից յետոյ, որը պէտք է կայանայ Թիֆլիսում։ Այդ համագումարը, այն է ընագէտների և բժիշկների համառուսական XIII համագումարը, գրաւելու է բաւմաթիւ այցելուների դէպի մեր երկիրը, որոնց մի մասը կը գնայ անշուշտ շրջագայելու Ալէքսանդրօպոլի, Էջմիածնի, Անիի շրջանները։ Եւ ուրեմն Ալէքսանդրօպոլի ցուցահանդէսի այցելուների մի մասը կը լինի բաղկացած լուրջ պատրաստված գիտնական անձերից։

Ահա Շիրակի կուլտուրայի նախանձախնդիրների համար մի յարմար առիթ՝ ցոյց տալու իրանց երկրի հարստութիւնները և կարիքները, քննութեան ապարէզի վրա դնելու ալիքական տընտեսութեան խնդիրները և առաջ մղելու կուլտուրական բարեկարգութեան մի շարք ծրագիրներ։

Դա թէ կուլտուրայի խնդիրը է և թէ, ինչպէս ասացինք, նաև պատուի խընդիրը։

Կարևոր է, որ այդ խնդիրը դրական բարեյաջող լուծումն ստանայ։ Իսկ այդպիսի հետևանք առաջացնելու համար անհրաժեշտ է, որ մարդիկ լուրջ կերպով պատրաստվեն կուլտուրական այդ հանդէսի իրագործութեան համար։

Աշխատանքի մի մասը յանձն են առել Կովկասեան Գիւղատնտեսական և Հայ Գիւղատնտ. և Տնտեսագործական Ընկերութիւնները, միւս մասը ընկնում է Ալէքսանդրօպոլի քաղաքային ինքնավարութեան և առ հասարակ Շիրակի բանիմաց գործողների վրա։

Դեռ անցեալ ամառ Ալէքսանդրօպոլում ցուցահանդէսի խնդրի քննութեան առիթով տեղի ունեցաւ երկու խորհրդակցութիւն, որին մասնակցում էին թէ գիւղատնտեսական ընկերութեանց ներկայացուցիչները, թէ քաղաքագլուխը և թէ կրթական և ուրիշ հաստատութիւնների ներկայացուցիչները։ Բոլորիքեան վերաբերվեցին ցուցահանդէս կազմելու առաջարկին մեծ համակրութեամբ և նոյն իսկ մշակեցին իրենց ժողովելու ծրագիրը, որը մասամբ էլ իրագործվեց։ Այս օրերս մենք տուիք ունեցանք խօսելու Ալէքսանդրօպոլի քաղաքագլխի հետ և մշակելու համագործակցութեան մի յատակագիծ։ Մնում է, որ Ալէքսանդրօպոլի քաղաքային ինքնավարութիւնը և առ հասարակ Շիրակի բանիմաց գործողները իրանց արտին մօտ առնէին ապագէզի վրա դրված խնդիրը և ամէն կերպ նպաստէին ու աջակցէին կուլտուրական լուրջ գործի աջող իրագործութեան։

Ս. Քալանթար

ՓՈՆԱՐԲԱՑԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լոյս մարտի 26-ի գիշերը Նորին Գայծառկ Հաղութիւնը քնեց բաւական։ Առաւօտեան զգում էր բաւական առոյգ։ Մարմնի ոտքութիւնն էր 36, զարկերակը 64 մի րոպէում, շնչառութիւնը 24—28 մի րոպէում։ Մօտարգրեցին բժիշկները՝ Ադամեան, Րուդինկօ, Շէվչենկօ։

—

Ղազախից մեզ գրում են, որ այնտեղ հայ համայնքի մասնակցութեամբ գործակալ Զ. ք. Ապրեսեան կատարել է մաղթանք փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի առողջութեան համար, որից յետոյ հեռագրվել է կոմսուհուն ղազախեցի հայերի այդ զգացմունքների մասին։ Կոմսուհի Վորոնցով-Դաշկովան ի պատասխան այդ հեռագրի յղել է Ապրեսեան քահանայի հասցէով շնորհակալական հեռագիր փոխարքայ կոմսի և իր կողմից։

ԳԵՐՄԱՆԻԱՑԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՇԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 մարտի

Բերլին.—Բէյխստագ։ Զօրքի խաղաղ կազմի ուժեղացման օրինագծի առաջին ընթերցումը։ Դահլիճը լի է։ Ներկայ են բոլոր մինիստրները։

Պետական կանցլերը ճառ արտասանեց, որի մէջ ասաց, թէ չը նայած զօրքի պարբերաբար ուժեղանալուն, գերմանական զօրքի զարգացումը չէ համապատասխանում ազգաբնակութեան աճմանը։ Գերմանիան այսուհետև չէ կարող միջոցների բացակայութեան պատճառով հրաժարվել ասացնակ հազար հրթիռած զինուորից։ «Ոչ ոք չը գիտէ՝ թէ կը լինի արդեօք առաջ սարակ և երբ կը լինի պատերազմ, բայց եւրոպական պատերազմը, եթէ Գերմանիան չը մասնակցէ նրան, անհաւանելի է»։

Քննելով ներկայ քաղաքական դրութիւնը, կանցլերը ասաց. «Եւրոպան շնորհակալ է Գրէյից օրինակելի անձնազոհութեան ու այն խաղաղասէր ոգու համար, որով նա ղեկավարեց Լօնդոնի դեսպանաժողովի խորհրդակցութիւնները։ Գերմանիան մասնակից է այդ շնորհակալութեան ևս առաւել, որ իրան համարում է միանգամայն համերաշխ անգլիական քաղաքականութեան հետ։ Լօյալօրէն պաշտպանելով իր դաշնակցին, նա գործեց միևնոյն ոգով։ Այժմ խօսքը այն մասին է, որպէսզի անպայման իրականանան մեծ պետութիւնների վճիռները։ Այն ժամանակ կալոզվի խաղաղութեամբ վերջ դնել դեռ չը լուծված հարցերին»։

Ապա կանցլերը ընդգծում է, որ պատսիվ դարձած Թիւրքիայի փոխարէն այսուհետև հանդէս են գալիս պետութիւնները, որոնք ցոյց են տալիս բոլորովին անաւոր ակտիվ կենսունակ ոյժ։ Ամենքն էլ բացարձակապէս շահագրգռված են, որպէսզի այդ ոյժը նոյն կերպ ապացուցանէ զինքը խաղաղ աշխատանքի մէջ, ինչպէս պատերազմում, որպէսզի բալկանեան պետութիւնները ոտք դնեն նոր արշալոյսի տարեշրջանը իրանց հարևանների հետ տնտեսական ու կուլտուրական սերտ միութեամբ և եւրոպական պետութիւնների բովանդակ համախրմբմամբ։ «Սակայն, եթէ երբևիցէ հրդեհ ծագէ, սլաւօն և գերման ժողովուրդները իրար դէմ առ դէմ կը կանգնեն։ Գերմանացիների համար անդադարէ կը ներկայանայ այն հանգամանքը, որ այն տեղը, որ գրաւում է Եւրոպական Թիւրքիան եւրոպական հաւասարակշռութեան սիստեմի մէջ, այժմ մասամբ գրաւված կը լինի հարաւ-սլաւօնական պետութիւններից»։

Կանգ առնելով Գերմանիայի դէպի Ռուսաստանը ունեցած յարաբերութիւնների վրա, կանցլերը ասաց. «Մեր մեծ սլաւօնական հարևան Ռուսաստանի կառավարութեան հետ մենք գտնվում ենք բարեկամական յարաբերութիւնների մէջ։ Այն ժամանակից, երբ ես գրաւում եմ իմ պաշտօնը, ես իմ նպատակը համարեցի պահպանել անկեղծ, վստահութեամբ լի յարաբերութիւնները ռուսաց կաբինետի հետ (ծափահարութիւն)։ Երբ ես ընդհանրապէս և պետական այն գործիչների հետ իմ անձնական ունեցած յարաբերութիւններից, որոնք Նիկոլայ II կայսրի կամքով վարում են ռուսական քաղաքականութիւնը Գերմանիայի հետ բարի հարևանութիւն պահելու շահով, ես այն համոզմունքը ստացայ, որ իմ ձգտումները նրանց մօտ գտնում են համակրական արձագանք։ Ես շեշտակի հակառութիւններ չեմ տեսնում մեր և Ռուսաստանի շահերի միջև։ (Ձայներ՝ «բրաւօ»)։ Գերմանիան և Ռուսաստանը կարող են աշխատել իրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման վրա վէճի չը բռնվելով միմեանց հետ։ Բարի փոխադարձ յարաբերութիւնները կարող են միայն նպաստել այդ զարգացմանը։ Սլաւօնականութեան և գերմանականութեան ցեղական հակառութիւնները ինքնին պատերազմի պատճառ չեն դառնայ մեր և Ռուսաստանի միջև։ Մենք, յամենայն դէպս, դրա պատճառով պատերազմ չենք սկսի, կարծում եմ, որ չեն սկսի նաև Ռուսաստանի ներկայ ղեկավարները։ Սակայն ռուս պետական գործիչներին նպաստէս, ինչպէս և մեզ, յայտնի է, որ համասլաւօնական հոսանքները, որոնք անհանգստացնում էին դեռ Բիսմարկին, չափազանց տարածվել են բալկանեան սլաւօնական երկիրների յաղթութիւններից յետոյ։ Համասլաւօն ղեկավարները՝ [illegible] և պետական այն գործիչների հետ իմ անձնական ունեցած յարաբերութիւններից, որոնք Նիկոլայ II կայսրի կամքով վարում են ռուսական քաղաքականութիւնը Գերմանիայի հետ բարի հարևանութիւն պահելու շահով, ես այն համոզմունքը ստացայ, որ իմ ձգտումները նրանց մօտ գտնում են համակրական արձագանք։ Ես շեշտակի հակառութիւններ չեմ տեսնում մեր և Ռուսաստանի շահերի միջև։ (Ձայներ՝ «բրաւօ»)։ Գերմանիան և Ռուսաստանը կարող են աշխատել իրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման վրա վէճի չը բռնվելով միմեանց հետ։ Բարի փոխադարձ յարաբերութիւնները կարող են միայն նպաստել այդ զարգացմանը։ Սլաւօնականութեան և գերմանականութեան ցեղական հակառութիւնները ինքնին պատերազմի պատճառ չեն դառնայ մեր և Ռուսաստանի միջև։ Մենք, յամենայն դէպս, դրա պատճառով պատերազմ չենք սկսի, կարծում եմ, որ չեն սկսի նաև Ռուսաստանի ներկայ ղեկավարները։ Սակայն ռուս պետական գործիչներին նպաստէս, ինչպէս և մեզ, յայտնի է, որ համասլաւօնական հոսանքները, որոնք անհանգստացնում էին դեռ Բիսմարկին, չափազանց տարածվել են բալկանեան սլաւօնական երկիրների յաղթութիւններից յետոյ։ Համասլաւօն ղեկավարները՝ [illegible] (Ռուսաց-գերմանական յարաբերութիւններին նուիրված ճառի մի մասը յաջորդ ընդհատվում էր «բրաւօ» աղաղակներով)։

Դիմելով դէպի Ֆրանսիան, տածած յարաբերութիւններին, որոնց կանցլերը անուանեց լաւ, նա ասաց. «Ֆրանսիան վառահացաւ սեփական զօրքի ոյժին և Ռուսաստանի հետ կապած դաշնակցութեանը, գուցէ և յենվում է Անգլիայի հետ ունեցած բարեկամութեան վրա և յոյս ունի, որ նա եթէ չէ գերապանցում իր ոյժով Գերմանիայից, յամենայն դէպս նրանից պակաս չէ։ Ֆրանսիացիք արդէն նախատեսում են, թէ ռուսական հեծելազօրի և հետևակ զինդերը հեղեղում են Գերմանիան։ Ֆրանսիական վառ երևակայութեամբ Թիւրքերի պարտութիւնները հանդիսանում են գերմանացիների պարտութիւն։ Դրանում նրանք համերաշխ են համասլաւօնական հայեացքների հետ։ Բալկանեան պետութիւնների միանալը եռապետեան համաձայնութեանը արդէն նկատի են առնում, արդէն տնօրինում են Գերմանիայի ապագան, հայեացք նետելով դէպի Էլզաս-Լօթարինգիան... Այս ամենի մէջ քիչ չեն պատրանքները, սակայն երազներով տարված Ֆրանսիան մի անգամ արդէն պատերազմ է սկսել Գերմանիայի դէմ «Վեռապետան դաշնակցութիւնը այժմ աւելի ամուր է, քան երբևէ եղել է, և ծառայում է ոչ միայն դաշնակիցներին, այլ և ամբողջ աշխարհին։ Զը նայած դրան, Գերմանիան, ինչպէս ոչ մի ուրիշ երկիր, պէտք է պատրաստ լինի պաշտպանվել երկու կողմից։ Հարևան մեծ պետութիւնները մեծ եռանդ են դրսևորում [illegible] թիւնների շքեղանում։ Ռուսական հըսկայ պետութիւնը առատապէսական արագութեամբ աճում է անտեսական տեսակէտից. անտեսական զարգացման հետ ձեռք-ձեռքի տուած ընթանում է զօրքի վերակազմութիւնը Ռուսաստանում սկզբում չեղած չափերով։ Ֆրանսիական զօրքը շատ լաւ է. այժմ Ֆրանսիան ցանկանում է նորից մտցնել եռամեայ զինուորական ծառայութիւն։ Մենք օրինագիծ ենք ներկայացնում ոչ թէ այն պատճառով, որ պատերազմ լինի, մենք յաղթող եթէ օրինագիծը օրէնք դառնայ, մենք ի հարկէ չենք խախտի հանդէս խաղաղութիւնը, ինչպէս վարվել ենք մինչև այժմ։ Ընդհակառակն, ուժեղ սեփական հզօրութեամբ ու հաւատացած ինքն իրան, Գերմանիան կը հանդիսանայ խաղաղութեան երաշխիք։ Թոյլը միշտ ընկնում է անխիղճ ոտակ...»

Վերջում կանցլերը շօշափեց Անգլիայի հետ ունեցած յարաբերութիւնները, անուանեց նրանց լաւ և ասաց, որ Գերմանիան երբէք չէ կամենում ստրկացնել, բայց կամենում է, անհրաժեշտութեան դէպքում, իր մեծաքանակ լուծը ասել յօգուտ խաղաղութեան (բուռն ծափահարութիւն)։

Կանցլերը վերջացնում է՝ ձայնը բարձրացնելով. «Եթէ որևէ մէկը սպառնում է մեր տանը, մենք պատրաստ ենք ամենքս միասին, մինչև վերջին մարդը (բուռն ծափեր. սօցիալ-դեմօկրատները լռում են, նորից բուռն ծափահարութիւն)։

Պետական կանցլերից յետոյ հանդէս եկաւ զինուորական մինիստրը, որ ընդգծեց երկաթուղային, հեռագրական և օդագնացութեան ծառայութիւնը ուժեղացնելու անհրաժեշտութիւնը։

Սօցիալ-դեմօկրատ Հասզէն կարծում է, որ բալկանեան ժողովուրդները որոշ ժամանակ կը դադարեն քաղաքական հզօրութեան ֆակտոր լինելուց, որովհետև նրանք արիւնաքամ են եղել։ Դա մի կողմից, իսկ միւս կողմից՝ նրանց միջև առաջ կը գան մեծ տարաձայնութիւններ որսի բաժանման ժամանակ։ Գերման ժողովրդի գերակշռող մեծամասնութիւնը պատերազմ չէ կամենում յանուն Աւստրիայի տէնչերի։ Կանցլերը, Հասզէի ասելով, չափազանցում է Ռուսաստանի հաւասլաւօնական հոսանքը։

Կենտրօնի պարագլուխ Եպանը խօսում է յօգուտ օրինագծի։ «Ձիշդ է,—ասում է հռետորը,—որ դէպի ռուսաց կառավարութիւնը յարաբերութիւնները, շնորհիւ թագաւորող տների բարեկամական ու ազգակցական կապերի, լաւ են, բայց չը պէտք է մոռանալ, որ Ռուսաստանը և Ֆրանսիան կապված են դաշնակցութեամբ։ Ֆրանս - գերմանական պատերազմի դէպքում Ռուսաստանը պարտաւոր է հանդէս գալ, ինչպէս և Ֆրանսիան պէտք է ասպարէզ գայ, եթէ Ռուսաստանը պատերազմէ Աւստրիայի դէմ։ Դրան պէտք է աւելացնել, որ Ռուսաստանը ամենից աւելի զգում է երան առաջնընթաց սլաւօն տերութիւն»։

Պետական կանցլերը, պատասխանելով սօցիալ-դեմօկրատներից մինի տեղին արած նկատողութեան, ասաց. «Ռուս հարևանի հետ մենք երբէք չենք մրցի սպառազինման մէջ։ Ռուսաց ծաղը միշտ կարող է աւելի մեծ թիւով զինուոր հանդէս բերել, քան Գերմանիան»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 մարտի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Մամուլը քաջ օրգանների մէջ երևացած յօդուածները այն խօսակցութիւնների մասին, որ ունեցաւ արտաքին գործերի մինիստրը Դումայի անդամների հետ արտաքին քաղաքականութեան հարցերի առիթով, մեղանչում են իսկութեան դէմ։ Որովհետև յիշեալ զրուցաբանութեան ժամանակ ոչ մի կողմնակի անձն ներկայ չէը, իսկ պատգամաւորները համաձայնեցին մամուլի մէջ չգովարարել մինիստրից լսած յայտարարութիւնները, ապա ուրեմն լրագիրները չէին կարող իրանց հաղորդած տեղեկութիւնները քաղել աղբիւրից, ուստի և վերջինները հանդիսանում են անհիմն։

—

Սալոնիկ.—Եկաւ բոլգարական պատճառանդ արքայազնը։ Գալու է նաև սերբական Ալէքսանդր արքայազնը։

—

Զագրէբ.—Լեհական կօլօյի նախաւում փոխարքայ Բօբրժինսկին ընդգծեց, թէ Աւստրիայի պետական իմաստութիւնը, ինչպէս նաև լեհական շահը պահանջում են վճռապէս ճնշել ռուսական շարժումը Գալիցիայում։ Փոխարքան, հաւատարիմ պատմութեան, ճնշում է ռուսական ագիտացիան, ընդունելով որ նա վտանգաւոր է պետութեան համար և թշնամական է լեհական արդէգեմոնիային։

—

Մուկդէն.—Զինական տեղեկութիւնների համաձայն, Նեբքին Մոնգոլիայում աճում է չինական բէժիմի դէմ սկսված դժգոհութիւնը։

—

Պէկին.—Խուբէյի նահանգում նկատելի դժգոհութիւն է տիրում Պէկինի կառավարութեան դէմ։ Զօրքերը անյուսալի են։ Ուչանում յայտարարված է պատերազմական դրութիւն։ Ամեն օր կատարվում են մահապատիժներ։

—

Աստրխան.—«Մխիթար» նաւի խորտակման ժամանակ խեղդվեցին 30 նաւաստի, որոնք թեում և նաւապետը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 մարտի

Սկօպլէ.—Սկումբի գետից դէպի հարաւ Լիւշնի գիւղի մօտ կատաղի կռիւ տեղի ունեցաւ սերբերի և Ջավիդ փաշայի զօրամասի միջև, որ բոլորովին չարդվեց։ Գերի ընկան 1000 զինուոր, 18 օֆիցեր։ Մնացածները փախան Փէրլեպէ ուղղութեամբ։

—

Կ. Պոլիս.—Զաթալջայում թիւրքա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒՀԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ընկեր Հարությունյանի)

— Երբ ամեն ինչ պատրաստ էր ընկեր Հարությունյանի հետ հանդիպման համար, հանկարծ հեռախոսով հայտնեցին, որ 500 մարդ հայ գրողներ ու գրասեր կանայք ցանկանում են հանդիպել ընկեր Հարությունյանի հետ։ «Մարդ 13-րդ, մարդ 14-րդ անգամ է գալիս, ասում է՝ ես ընկեր Հարությունյանի հետ եմ ուզում խոսել, ես ընկեր Հարությունյանի հետ եմ ուզում լուսանկարվել։ Ես ինքս ինձ ասում եմ՝ ինչ ընկեր Հարությունյան, ինչ բան, ինչ ես ուզում, որ ես ասեմ, ինչ ես ուզում, որ ես անեմ

Ա. Վ. Մամուլեան հիւանդացել է տիֆով եւ ընկել է հիւանդանոց։

Ընկերը ֆիզիքապէս խիստ տառապում է ձեռքի ցաւերից եւ ոչ մի կերպ չի կարողանում գրել։ Ընկերը ուղարկել է իր հիւանդութեան վկայականը։

Նաղաբեանին, որով յայտնում էր իր սիրելի ընկերակից Գ. Տէր-Դաւթեանի յօբելեանական յանձնաժողովի պատուաւոր նախագահ կոչումն իր ստանձնելու համաձայնութիւնը և մասնացնում էր իր յարգանքը յօբել. յանձնաժողովին։

Ժողովականները որոշեցին յօբելեանի տօնախմբութիւնը յետաձգել մինչև աշուն և կարգադրը բիւրօյի անդամ ընտրել մի քանի հարուստներ էլ, որպէսզի դրամ ժողովվի յօբելեարի համար։

Տ. Նաղարեան հաճատուեց այդ առաջարկին, ասելով որ Գրական-Գեղագիտական Սալօնը ստանձնել է նախաձեռնութիւն տօնելու դերասան Տէր-Դաւթեանի յօբելեանը ոչ թէ նրա համար դրամ հաւաքելու, այլ յարգանք մատուցանելու և պաշտամունք կատարելու հայ քանքարատուր ու վաստակաւոր դերասանին։ Ուստի հարկ չը կայ յետաձգելու յօբելեանը մինչև աշուն։

Ընտրվեց յօբել. յանձնաժողովի անդամներից—որոնց թիւը 30-ի է հասնում—կարգադրը բիւրօ 11 հոգուց, որոնք են՝ ներկայացուցիչներ Հ. Դրամատիկական Ընկ., Հ. Ազգագր. Ընկ., Հ. Երաժշտ. Ընկ., Գր.-Գեղագիտ. Սալօնի, Թիֆլ. քաղաք. վարչ., Թիֆլ. Բազ. Վարկի Ընկ., մամուլի, արուեստի, գերասանական խմբի և Հայւոց բարի. սրանք են՝ ա.ա. Նունէ Դօլուխանեան, Նունէ Ղամբարեան, Վիրգինէ Մամուկեան, Իւլիա Սպէնդիարեան, պ.պ. Միք. Աթաբէկեան, բժշ. Ե. Իգիթեան, Գևդէոն Մելիքեան, Տ. Նաղարեան, Գէորգ Տէր-Ասատուրեան, Ալ. Քալանթար, Սերգ. Տէրվոճեան։

Որոշվեց յօբելեանը տօնել առաջիկայ մայիսին, օրը, տեղը, տօնախմբութեան ձևը թողնելով կարգադրը բիւրօյին։ Վերջինս խնդրեց Տ. Նաղարեանին Գրական-Գեղագիտական Սալօնում հրաւիրել կարգադրը բիւրօյի նիստ մօտ օրերս, որ և յայտարարվեց հենց առաջիկայ ուրբաթ, երեկ. ժամը 8-ին։

Օբելեանական յանձնաժողովի ընդհ. այս ժողովը փակելուց յետոյ սկսվեց Սալօնի հերթական երեկոյթը։

Տ. Նաղարեան հանդիսաւորապէս կարդաց թագաւոր Կայսրից փոխարքայի մի ջոցով ստացված հեռագիրը, որ պատասխան է այն շնորհաւորական հեռագրի, որ ուղարկված էր Բօմանօվների Սրբազնական Տան յօբելեանի առիթով Սալօնի կողմից։

Ահա ստացված հեռագիրը։

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի փոխարքայի ամենահպատակաբարեն ուղարկած հեռագրին պատասխան, որով «Աղբիւրը» և «Տարազ» հանդէսների խմբագիր-հրատարակիչ, Գրական-Գեղագիտական Սալօնի տեսուչ Տիգրան Նաղարեանը արտայայտել է իր կողմից և ինչպէս լիազօր փետրվարի 22-ին Սալօնի հերթական երեկոյթին ներկայ եղող արուեստի, գրականութեան ներկայացուցիչների և ուրիշ ներկայ եղողների կողմից Թագաւոր Կայսրին հաճելի էր հեռագրով հրամայել գեն.-ադիւտանտ կոմս Վօրօնցով-Դաշկովին յանձնել յիշեալ անձանց Նորին Կայսերական Մեծութեան սրբատպին շնորհակալութիւնը՝ արտայայտված բարեմաղթութիւնների և ուղարկված զգացումների համար։

Ապա երեցդողութեան պրօֆ. Բրօյլի վեհ կաւարութեամբ երկտեղ երգիչների խումբը երգեց առաջ ազգային հիմնը, որ կրկնվեց մի քանի անգամ։

Այդ երեկոյ ներկայ էին շատ երգիչներ և ուրիշ արուեստագէտներ, որոնցից շատերը մեծ հաճոյք պատճառեցին ներկայ եղողներին իրանց երգ. ու նուագով։

Տ. Նաղարեան յայտարարեց, որ մարտի 25-ին լրանում է Կովկասի փոխարքայի օ-ֆիցերական ծառայութեան 55-ամեակը։ Ժողովականները միաձայն փափագ յայտնեցին Սալօնի կողմից հեռագրով շնորհաւորել յօբելեար փոխարքային։ Իսկոյն կազմվեց մի յանձնաժողով կազմելու հեռագիրը, որը և կատար ածվեց։

Ահա այդ հեռագիրը։

«Աղբիւր»-Տարազի» Գրական-Գեղագիտական Սալօնում ժողովված աշխատակիցները, դիւտէքեան, արուեստի, գրականութեան, երաժշտութեան, նկարչութեան ներկայացուցիչները և ես ակնածութեամբ ողջունում ենք Ձերդ Գայծառափայլութեան օֆիցերական 55-ամեայ փայլուն բեղուն ծառայութիւնը։ Ի խորոց սրտի աղօթում ենք Բարձրեալին պարգևել Ձեզ՝ բազմացեղ, բազմալեզու կովկասի ընտանիքի պայծառ նահապետ-հովանուն, քանդագին յօբելեար երիզ լիուլի և շուտափոյթ առողջութիւն։

Ապա Ա. Քալանթար յայտնեց, որ մանրանկարչութեան վերաբերեալ իր բեմբասրը կը կարդայ առաջիկայ ուրբաթ, մարտի 29-ին։

Ժողովականները ցանկութիւն յայտնեցին, որ կարդացվի ռուսերէն, որպէս զի բոլորեքեանք էլ կարող լինեն մասնակցել զրոյցին։ Ցանկութիւն յայտնվեց, որ բոլոր նկարիչները էլ մասնակցեն այս զրոյցին։

Ներկոյթը վերջացաւ 4½ գիշերին։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Физическое воспитаніе» (Ֆիզիկական կրթութիւնը) Բժիշկ Վ. Վ. Գօրինևսկիի։

Նորերս մանկավարժական գրականութիւնը հարստացաւ մի նոր ձեռնարկով՝ դաստիարակների, ուսուցիչների և ապա այն անձերի համար, որոնք պարապում են ֆիզիկական դաստիարակութեամբ։ այդ ձեռնարկը պատկանում է բժ. Վ. Վ. Գօրինևսկիին՝ «Ֆիզիկական կրթութիւնը» վերնագրովն։ Գործի մէջ մտնելուց առաջ բժիշկ Գօրինևսկին հետաքրքրվում է մեծ չափազանութեամբ, խնդրին նկատվում է, որ այդ աշխատութիւնը երկարամեայ փորձառութեան և ֆիզիկական դաստիարակութեան խնդրի խորին ուսումնասիրութեան արդիւնք է։

Վերջին ժամանակներս հատարակութիւնը խօսեց մանուկների ֆիզիկական դաստիարակութեան պակասութեան մասին և խօսից այնքան լուրջ կերպով, որ այդ հարցը դարձաւ մեղմային։ Ամենք մանուկների ֆիզիկական զարգացումը տեսնում էին զինուորական վարժութեան մէջ, ամենք սկսեցին առանձին նշանակութիւն տալ օլիմպիական խաղերին, սպօրտին, մեւսներն էլ առանձնապէս ծանրացան ձեռագործ աշխատանքի վրա, իսկ ոմանք էլ իրանց զառակներին փորձեցին սպօրտամէններ դարձնել և այլն, և այլն։ Առաջ եկաւ ուժեղ ձգտումն դէպի սպօրտը, խաղերը, ըմբշամարտը, մարմնական զանազան վարժութիւնները, որոնք աչքի են ընկնում իրանց հեղուսական բնաւորութեամբ։

Բժիշկ Գօրինևսկիի աշխատութիւնը, իբրև փորձառու, գործնական մանկավարժի, ֆիզիկական դաստիարակութեան գործին լաւ ծանօթ աշխատութիւն, ընթերցողներին հնարաւորութիւն է տալիս ըմբռնելու ֆիզիկական դաստիարակութեան հետ կապված հիմնական պրօբլեմները։ Հիմնաւորապէս ծանօթացնելով ընթերցողներին այն ազդեցութեան հետ, որ ունեն ֆիզիկական վարժութիւնները օրգանիզմի վրա, ապա ֆիզիկական, մտաւոր և բարոյական գործունէութեան մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնները՝ ֆիզիկական զարգացման վրա ունեցած գիտական փորձնական կօնտրոլի հետ, այլ և ֆիզիկական կրթութեան մէջ ոգնած և ձևերի, մարմնամարզական սիստեմի, ֆիզիկական վարժութիւնների առողջապահութեան հետ, հեղինակը գնում է, որ դպրոցը չը պէտք է աշակերտներից ոչ ատլետներ պատրաստի, ոչ լարախաղացներ, ոչ սպօրտմէններ՝ սպօրտի յատուկ ուղղութեամբ և ոչ էլ զինուորներ։ Դպրոցի իւրաքանչիւր շեղումը իր յատուկ նպատակներից հասցնում է նրան վատ հետևանքների։ Դպրոցի նպատակն է,—ասում է յարգելի հեղինակը,—պատրաստել մանկանը ապագայ գործունէութեան համար, անկախ նրա ընտրած պրօֆեսիայից։ Դպրոցներում կանոնաւոր դրված ֆիզիկական կրթութիւնը պէտք է հաղորդէ այնպիսի յատկութիւններ ու ընդունակութիւններ անհատին, որոնք կարող լինեն նպաստելու նրա յետագայ կատարելագործութեանը, այլ ոչ այնպիսի յատկութիւններ, որոնք հարկաւոր պիտի գան կեանքի այս կամ այն դէպքում միայն։

Ֆիզիկական կրթութիւնը նոյնքան պատասխանատու դեր կարող է կատարել մարդու ընդհանուր կրթութեան գործում, որքան մտաւորն ու բարոյականը։ Մարմնամարզութեան պատրաստված ուսուցիչը կամ մանկական խաղերի խելացի ղեկավարը ընդունակ է երեխաների մէջ առաջ բերել լաւ արամադրութիւն, եթէ ընտրի համապատասխան վարժութիւններ։ Նա կարող է բարձրացնել նրանց արամադրութիւնը, առաջ բերել լաւ շարժուձևերի խաղ, կենդանացնելով դէմքի միմիկան և ժպտեցնելով մարդու ներքին գեղեցկութիւնը նրա արտաքին ձևի գեղեցկութեանը։

Մանկական ֆիզիքական դաստիարակութիւն ասելով յարգելի հեղինակը հասկանում է այն, ինչ որ մարդ կարող է տալ իր երեխաներին՝ խնամատարութիւն, առողջապահութիւն, նրանց ոյժերի պահպանումը, առողջութիւն (ոչ ամրութիւն, ոչ խօսքով այն ժամին, որով երեխան շրջապատող կեանքից ազդվում ու կազմավորվում է՝ հասակաւորների որոշ հոգատարութեամբ։ Տարբեր միջավայրը տարբեր էլ դաստիարակութիւն է տալիս։

Գրքի գեղեցիկ բովանդակութիւնը, նիւթի աղող դասաւորութիւնն ու նրան կցված յատկուածը՝ հարցին վերաբերեալ գրականութեան մասին՝ հիմք են ծառայում մեզ յանձնարարելու այդ աշխատութիւնը ծնողներին, դաստիարակների և ուսուցիչների լուրջ ուշադրութեանը։

Ս. Վ. Արզութեան երկայնաբազուկ

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս գիտենք, ֆրանսիական կառավարութիւնը, ստիպված՝ Գերմանիայի անընդհատ սպառազինութիւնից, ինքն ևս մտածել սկսեց նոր սպառազինութիւնների մասին և առաջարկեց պարլամենտի հատատաութեանը զինուորական եռամեայ ծառայութեան և նոր սպառազինութեան օրինագծերը։ Սակայն Ֆրանսիայի սօցիալիստական կազմակերպութիւնները հակառակ են այդ նոր օրինագծերին։

Նորերս Բրեստ քաղաքում կայացաւ սօցիալիստների իններորդ կօնգրէսը, որ իր քննութեան առարկայ դարձրեց այդ օրինագծերի դէմ կռուելու հարցը։ Կօնգրէսին առաջարկվեց կօմպէր-Մօրելի մշակած մի բեզոլիւցիան, որի մէջ յիշված է, թէ ֆրանսիական կառավարութեան առաջարկած նոր օրինագծերը ցոյց են տալիս նախօրօք և չովինիստ տրամադրութիւնների ահռելի, որի դէմ սօցիալիստները պարտաւոր են մղել կատաղի կռիւ։ Ինչ վերաբերում է Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւններին, երկու ազգերը կոչ րող են տալել խաղաղութեամբ իրար հետ՝ կիլոլով իրանց մէջ ամէն տեսակ համաձայնութիւն, պէտք է միաժամանակ դիմեն զինաթափութեան։ Բէզոլիւցիայի եղրափակման մասը ասում է։

Կօնգրէսը ուրախ է տեսնելով գերմանական և ֆրանսիական սօցիալիստական կուսակցութիւնների միացած գործակցութիւնը և շեշտում է իր համերաշխութիւնը Էլզասի և Լօթարինգիայի սօցիալիստների հետ։ Դրա հետ միասին նա հարկաւոր է համարում յիշեցնել և այն, որ Էլզասի և Լօթարինգիայի ամբողջ ազգաբնակութիւնը յայտարարել է, թէ որևէ դէպքում նա չէ ցանկանում այնպիսի մի բէվանշ, որ կարողանար զինաւորեալ ընդհարումն առաջ բերել Ֆրանսիայի և Գերմանիայի միջև։ Ուստի և կօնգրէսը յանձնարարութիւն է տալիս սօցիալիստների պարլամենտական ֆրակցիային հոգս տանել, որ թէ պարլամենտում և թէ երկրում եռանդուն ագիտացիա մղվի Ֆրանսա-Գերմանական մերձեցման, միջազգային վէճերի արբիտրաժի, ազգային միլիցիաների մասին և եռամեայ զինուորական ծառայութեան դէմ։

Այդ բէզոլիւցիան ազդակից ծախահարութիւններով ընդունվեց միաձայն։ Դրանից յետոյ տեղի ունեցան հետաքրքրական վէճաբանութիւններ, որոնց մասնակցեցին Հերվիէ, Պրէսանսէ և այլք։

Հերվիէն հետևեալ առաջարկն արեց։

«Գերմանիայի և Ֆրանսիայի սպառազինութիւնները սերտ կերպով կապված են,—ասաց նա,—էլզաս-Լօթարինգիայի հարցի հետ։ Ֆրանսիացիները չը պէտք է մոռանան այդ մասին։ Ֆրանսիական սօցիալիստները պէտք է պնդեն կառավարութեան առաջ, որ նա համաձայնի սրբիտրաժի, համաձայնի զինաթափութեան և առաջարկէ նոյնը գերմանական կառավարութեան, պահանջելով որ նուազած երկու երկիրները առանձին ամենալայն աւտօնօմիա»։

— Իսկ եթէ Գերմանիան հրաժարվէ,—

— Այն ժամանակ,—պատասխանում է Հերվիէն,—վէճի դէպքում, ես կը նայեմ առաջարկը հերթող կողմի վրա՝ իբրև յարձակվողի և կը վարվեմ այնպէս, ինչպէս հարկաւոր կը գտնեմ։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Մամուլի նոր օրինագիծը ներկայացվեց մինիստրների խորհրդին։

✦ Մայրաքաղաքի բոլոր թերթերը կարգադրութեան համաձայն անկարող եղան տպել Րօդիչէվի արտասանած այն խօսքը, որ պատճառ դարձաւ մի անագին ականդալի Պետական Դուման յուզմանը։ Միայն Պետերբուրգում լեհական օրգանը տպել էր այդ խօսքը, որի համար և լրագրի համարը խակոյն գրաւվեց, իսկ խմբագրի դէմ դատ է սկսված։

✦ Ռուս նացիօնալիստները և ա-ջակողմեանները պահանջում են կօկովցեվից կամ ակտիվ քայլեր արտաքին քաղաքականութեան հարցերում, կամ հրաժարական տալ։ Հէնց որ Դուրնօվօն գլուխ անցնէ կառավարութեան, Ռուսաստանը նետվելու է համաեւրօպական պատերազմի մէջ։

✦ Պարզվում է, որ Լօնդօնի վեհաժողովի վճռից յետ չը հեռու համար ռուսաց դեսպան Բէնկէնդօրֆը համաձայնց Ռուսաստանի անունից մասնակցել Զերնօգօրիայի դէմ կազմակերպվող միջազգային ծովային ցոյցին, առանց այդ մասին լիազօրութիւն ստանալու արտաքին գործերի մինիստր Սազօնօվից։ Բէնկէնդօրֆի հրաժարականը կասկածից դուրս է։

✦ Չը նայած Ռուսաստանի և Ֆրանսիայի համաձայնութեան՝ վերջինս մասնակցելու ծովային ցոյցին ընդդէմ Զերնօգօրիայի, Բեռլինում իրերի դրութիւնը համարում են չափազանց լուրջ։ Բօրսայում պատվում են յուզիչ լուրեր։ Բէյխստագի բիւջէտային մասնաժողովում կառավարութեան ներկայացուցիչը կտրականապէս յայտնեց, թէ Սկիւտարի հարցը սպառնում է լուրջ բարդութիւններ, որոնք կարող են պատերազմ առաջ բերել Աւստրիայի և Ռուսաստանի միջև։ Բեռլինում հաւատացած են, որ եթէ Զերնօգօրիան վերցնէ Սկիւտարը, Աւստրիան կը հեռացնէ այնտեղից յոյթողներին և կը գրաւէ բերդը։ Գերմանիան խոստացել է աջակցել Աւստրիային։

✦ Սկիւտարի վերջնական ռմբակոծութիւնը չերնօգօրցիների և սերբերի ձեռքով արդէն սկսվել է և շարունակվում է ուժեղ թափով։

✦ Աւստրիայի զինուած քաղաքներում տեղի են ունենում հակառուսական ցոյցեր։ Իշխանութիւնները խստացրել են հսկողութիւնը սլաւօնների վրա։

✦ Աւստրիան վերսկսեց բերդերի կառուցումը ռուսական սահմանագլխում, ուր ուղարկվում են մի քանի զօրաբանակներ։ Վիէննայում և Բեռլինում քաղաքական սպառնական դրութեան պատճառով բօրսաների գները չափազանց ընկել են։ Աւստրիական գինւորական լիգան գահաժառանգ Ֆերդինանդի նախագահութեամբ մշակում է ապագայ պատերազմի ծրագիրը։

✦ Կ. Պօլսում երիտասարդ-թիւրքերը դաւադրութիւն են կազմել Քեամիլ փաշայի կեանքի դէմ, որ սուլթանի խնդրով գալիս է Պօլիս ստանձնելու իշխանութեան ղեկը։ Նորատուկեանը վերստին կոչվելու է արտաքին գործերի մինիստրի պաշտօնին։

✦ Կ. Պօլսում ուլէմաները և մօլլաները ամեն օր շարունակ մզկիթներում աղօթելով գեաուրների պարտութեան համար՝ միևնոյն ժամանակ քարոզում են սրբազան պատերազմ բոլոր քրիստոնեաների դէմ։ Միայն օտարերկրեայ ռազմանաւերի ներկայութիւնն է, որ զսպում է սուլթանի մայրաքաղաքի խուժանին էկսցէսներից։

✦ Զաֆարլյայում բօլգարները ձեռք ձգեցին մի քանի կարևոր դիրքեր թիւրքերի զօրքերի մի մասը փախչում է դէպի Կ. Պօլիս, ուր տիրում է յուսահատ տրամադրութիւն։

✦ Ադրիանուպօլսի մէջ սկսվել են սով և տարափոխիկ հիւանդութիւններ, որոնք մեծ թիւով զոհեր են տանում։

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը 26 մարտի

I կ. ներք. փոխ.		տոմս.	453 ր. — կ.
II »	»	»	353 ր. — կ.
III Աղնւակ. բանկ.		»	333 ր. — կ.
4% Պետական րենտա			93 ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ.		1906 թ.	103 ր. 25 կ.
5% Ներքին	»	1905 »	
		I հրատ.	104 ր. 87½ կ.
5% »	»	II հրատ.	104 ր. 87½ կ.
5% Պետ. Աղնւ. բանկ. դր. թ.			101 ր. — կ.
4½ »	»	» »	90 ր. 75 կ.
4% »	»	» »	89 ր. 50 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.			101 ր. — կ.
4½% »	»	» »	91 ր. — կ.
4% »	»	» »	90 ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ.		1908 թ.	105 ր. — կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդոն 10 ֆ. ստեր.	94 ր. 95 կ.
Բեռլին 100 մարկ	46 ր. 38 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 58 կ.
Թուրքիայ 100 դրուշ	1 ր. 73 կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զրի դեղատոմսն արեց

ա յ դ:

ՏԱՆՋԱՆՔՆԵՐՍ ՈՐ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԷԻՆ 20 ՏԱՐԻ, ԱՆՀԵՏԱՑԱՆ ՄԻ ԳԻՇԵՐՎԱՑ ՄԷՋ.

Եթէ որևէ մէկը ինձ ասէր, որ կարելի է շատ շուտով ապաքին քրօնիկական ցաւերից, ես չէի հաւատայ։ Ամբողջ 20 տարի անընդհատ ես տանջվել եմ ամենաուժեղ իշիասից և ընդհանուր ըէվմատիզմից։ Շատ անգամ ցաւերս միանգամայն անտանելի էին դառնում։ Այդ բոլոր ցաւերից ես բժշկվեցի շնորհիւ Զրի դեղատոմսին, որը ես մեծ ուրախութեամբ կը տամ իւրաքանչիւրին։ Մտէք մօտակայ դեղատունը կամ դեղավաճառոցը և գնէք 60 դրան կէֆալզօլ Սոսը 12 տաբլէտկաներում։ Ընդունէք երկու տաբլէտկա միանգամից, իսկ գիշերից յետոյ իւրաքանչիւր ժամը մի տաբլէտկա, մինչև որ ցաւերը անցնեն։ Իմ բժիշկը ասում է, որ այդ միջոցը նոյնպէս արագ ներգործում է գօտկատեղու ունեցած ցաւերի, նեվրալգիայի, գլխացաւի, նէֆրիտի ժամանակ և այլն։ Պատահել է ինձ տեսնել ամենաթանդ ինֆլուէնցայի դէպքը, որը բուժվել է 24 ժամվայ ընթացքում։ Ես գիտեմ, որ այդ հրաշագործ միջոցը գործադրվում է ներօպայի ամենալաւ հիւանդանոցներում։ Նրա գլխաւոր առաւելութիւնը կայանում է նրանում, որ միանգամայն անվնասակար է։

Ուսուցիչ Միխայիլ Լերեդով

(II 51748) (№ 6)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԹՈՒՄ.—**Ուրագ գնացքը** № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Ախտափա 12 ժ. 30 ր., Դանձակ 2 ժ. 55 ր., Նալչիկ 4 ժ. 26 ր., Հոլի-Կարսով 8 ժ. եր., Բագրու 11 ժ. 8 ր. գիշ.։ **Պօսուտար գնացքը** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Ախտափա 3 ժ. 30 ր. գիշ., Դանձակ 6 ժ. 41 ր. առ., Նալչիկ 8 ժ. 38 ր. առ., Հոլի-Կարսով 1 ժ. 13 ր. ցերեկ., Բագրու 5 ժ. 36 ր. ցերեկ.։ **Մարդասար գնացքը** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Ախտափա 8 ժ. 51 ր. եր., Դանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Նալչիկ 12 ժ. 56 ր. գիշ.։ Հոլի-Կարսով 4 ժ. 40 ր. գիշ., Բագրու 7 ժ. 53 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (Մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Ախտափա 10 ժ. առ., Դանձակ 2 ժ. 31 ր. ցերեկ., Նալչիկ 5 ժ. 45 ր. ցերեկ., Հոլի-Կարսով 12 ժ. 29 ր. գիշ., Բագրու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Մարդասար գնացքը** № 11—10 ժ. 3 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ **Պօսուտար գնացքը** № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 55 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվո 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ. **Խառն գնացքը** № 107 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօսուտար գնացքը** № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ալուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8/79 (միայն II և III կարգի վագոնների)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ալուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առաւ.։ **Մարդասար-ապրանքատար գնացքը** № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՕՐԺՕՄ.—**Մարդասար գնացքը** № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Բօրժօմ 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Ուրագ գնացքը** № 1—9 ժ. 10 ր. եր. **Պօսուտար գնացքը** № 3—9 ժ. առ.։ **Մարդասար գնացքը** № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Ուրագ գնացքը** № 12—8 ժ. 50 ր. առ., **Պօսուտար գնացքը** № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօսուտար գնացքը** №40/3—8 ժ. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 89/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդասար գնացքը** № 9/10В—11 ժ. 22 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Անձն օր, բացի կիրակի օրերից

ՆՇԱՆՕՑՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրկում ժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վններական (սիֆիլիս) հ.։

Բ. Գ. ԱԼԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Կ. Մ. ՀԻՒՕՂԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարգային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՐԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի

Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկ., վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխա պ հիւ. և ծաղկահամ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՅԵՐ.-ՊԱՒԼՈՒՆԱՆ—12—1 ժ. մանկաբարձութեան և կանանց հիւ.։

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

ԿԻՆ ԲԺՇԿ Մ. Լ. ՌՈՍԻԴԵՐ-ԱՐԾԵՂՈՎԱ—6—7 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հիւ.։

Վճարը 50 կ.։ Դաւարները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—36

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռականաց, վեներական և կաուսի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Մօլօկով, Ռէբրուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչ փողոցի)։ Տելեֆօն № 1175.

(Է. կ.) 377. 100—81

ԳՕԿՏՕՐ

Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆՑ

ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ձարմանակուս է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կատմում պրօֆեսօրների հետ։ Նոր հասցէն՝ Berlin, N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden 92—74.

(Է.) 148. 10—7

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

ցանկանում է ունենալ անտեսուհու պաշտօն։ Հմուտ է նաև կարուձևին։ Հասցէն՝ Саратовъ, до востребованія, А. М.

(օ.մ.) 237. 6—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՑԻ ՓՈՂՕՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտներ եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արեթագրէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրները շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԱՆԱՁԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՑՍ-ԿՈՒՐԱՆՑԻ ԴՆԵՐՈՎ։

Տ է լ է ֆ օ ն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный